


Հայ միջնադարյան գրականություն



ՆԱՀԱՊԵՏ ՔՈՒԶԱԿ

(1490 - 1592)



Նահապետ Քուզակը հայ առաջին աշուղ-երգիչներից է: Այդ են վկայում պահպանված ժողովրդական գրույցները և նրա Նահապետ վարպետ պատվանունը: Հայրեններից բացի Քուզակի անունով պահպանվել են շուրջ մեկ տասնյակ գրավոր ու բանավոր սիրային, կրոնական, բարոյախրատական, աշուղական երգեր՝ հայերեն և թուրքերեն: «Հայրեն» անունը ծագել է «հայերեն» բառից: Հայրենները հայկական տաղաչափական յուրահատուկ կառուցվածք ունեցող ոտանավորներ են: Երևան են եկել XIII դարի ձեռագրերում: Դրանք մեծ մասամբ սիրո, ուրախության ու խրատական երգեր են: Հորինվել են միջին հայերենով:

ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Նահապետ Քուչակը (Նահապետ վարպետ աշըղ Քուչակ, Չիչակ, վանեցի կամ Վանլի Քոչակ) ծնվել է, հավանաբար, Խառակոնիս գյուղում (Վանի նահանգ): Թաղվել է Խառակոնիսի Ս. Թեոդորոս եկեղեցու գերեզմանատանը: Քուչակը հայ առաջին աշուղ-երգիչներից է: Նրա մասին եղած ժողովրդական զրույցները և «Նահապետ վարպետ» կոչումը վկայում են, որ Քուչակը եղել է սիրված երգիչ և աշուղ: Նահապետ Քուչակի անունով գրավոր և բանավոր ավանդությամբ պահպանվել և առայժմ հայտնի են շուրջ մեկ տասնյակ կրոնական, բարոյախրատական և սիրային բովանդակությամբ աշուղական երգեր՝ հայերենով ու թուրքերենով: Այդ վերագրումն սկսվել է բանասեր Ա. Տևկանցի «Հայերգ» գրքից (1882) և հետագայում դարձել է գրական ավանդույթ, որին հետևել են նաև ուրիշ բանասեր-գրականագետներ: Թեև 1920-ական թթ. Մ. Աբեղյանը ապացուցեց այդ վերագրման անհիմն լինելը, բայց հետագայում ևս Նահապետ Քուչակը համարվել է միջնադարյան հայրենների հեղինակ, նրա անունով են հրատարակվել և բազմաթիվ լեզուներով թարգմանվել այդ երգերը: Այս իմաստով Նահապետ Քուչակը դարձել է պայմանական և հավաքական անուն, որով լայն շրջաններում հայտնի է հայ միջնադարյան քնարերգության այդ մեծ և հարուստ ժառանգությունը:

Նահապետ Քուչակի ծնունդը ենթադրաբար գրվում է 1490-ական թվականների սկզբներին, իսկ մահը, համաձայն հայրենի գյուղի Սուրբ Թեոդորոս եկեղեցու պատի տակ պահպանված շիրմաքարի արձանագրության, եղել է 1592 թվականին: Այս ժամկետները լիովին համընկնում են իր տարիքի մասին նրա թողած հիշատակարանի բովանդակությանը.

*Ես Քուչակս եմ վանեցի,
Ի գեղէն Խառակոնիսայ,
Լըցեր եմ հարիւր տարին,
Էլ չի գար մտքիկս ի վերայ....*

Քուչակի մասին միջնադարում ստեղծվել են տարբեր ավանդություններ: Ըստ դրանցից մեկի՝ Քուչակն իր երգերի մոգական զորությամբ բուժել է թուրքական սուլթանի՝ անբուժելի հիվանդությամբ տառապող տիկնոջը, որի համար սուլթանը, Քուչակի ցանկությամբ, Կոստանդնուպոլսից մինչև Խառակոնիս կառուցել է տվել յոթ կամուրջ, յոթ եկեղեցի և յոթ մզկիթ:

Համաձայն մեկ ուրիշ ավանդության՝ Նահապետ Քուչակն իր համագյուղացիներին հրավիրում է գյուղի եկեղեցու մոտ, իսկ ինքը բարձրանալով վանքի կատարը՝ ասում է, թե իրեն ցած է նետելու, որտեղ ընկնի, այնտեղ էլ թող թաղեն իրեն: Գյուղացիները՝ կարծելով, թե նա կատակ է անում, չեն հավատում նրա խոսքին: Իսկ նա իսկույն ցած է նետվում ու մեռնում: Ընկած տեղն էլ՝ եկեղեցու պատի տակ, թաղում են նրան: Հին գրչագրերում Քուչակի անունով պահպանվել է ինը բանաստեղծություն, որոնք ոչ մի ընդհանրություն չունեն միջնադարյան հայրենների հետ, ավելին՝ սկսած 1882 թվականից, որոշ հրատարակիչների ու գրականագետների կարծիքով, առանց որևէ լուրջ հիմնավորման, վերագրվում են Քուչակին: Բացի այդ՝ դեռ չի հայտնաբերվել հայրեն պարունակող որևէ հին ձեռագիր, որում հայրենների որևէ շարքի հեղինակ վկայվի Նահապետ Քուչակը:

ՄԵԾԵՐԸ ՆԱՀԱՊԵՏ ՔՈՒՉԱԿԻ ՄԱՍԻՆ

«Միակ սուլթանը, որի առջև Քուչակը գլուխ ծռեց, եղավ իր հավիտենական և ամենահզոր դիցուհին՝ Սերը»:

Վալերի Բրյուսով, ռուս բանաստեղծ

«Ոչ մի հայ բանաստեղծ այնպես չի «նկարել» իր սիրուհուն, ինչպես Քուչակը: Այս փոքրիկ երգերը փող առ փող, աննկատելի, կամաց-կամաց սրտեղծում են մի այնպիսի լայն կտավ, որ կարելի է տեսնել միայն մեծ վիպասանի մոտ»:

Պարույր Սևակ, բանաստեղծ

«Քուչակյան տաղարանը պեքք է բարձի գիրքերեն մեկն ըլլա ամեն հայ բանաստեղծի և ամեն հայ գրասեր պատանիի: Հայ դեռափի սիրտերը, որ սիրո քաղցրությունը կամ տառապանքը կզգան առաջին անգամ, ավելի թանկագին թարգման չեն կրնար գտնիլ իրենց զգացման, քան քուչակյան տաղիկները, որոնց յուրաքանչյուրը հոգեկան որոշ վիճակ մը կպատկերացնե, որոնց ոմանք ամբողջ սիրավեպ մըն են խտացած»:

Արշակ Չոպանյան, գրականագետ

▶ Գաղափար հայրենների մասին

Հայրենը հայկական միջնադարյան ժողովրդական տաղաչափության տեսակներից մեկն է: Բաղկացած է չորս 15 վանկանի տողից և նույնահանգ է: Երբեմն տողերը երկատվում են (7-8 վանկ), գրվում ութ տողով: Հայրենների սովորական թեմաներն են սերը, բերկրանքը, պանդխտությունը, խաղաղությունը և այլն: Հայրենները մեծ հետք են թողել հայ բանաստեղծական արվեստի վրա: Դրանց նմանությամբ և անվանումով գրել են հայ միջնադարյան բանաստեղծներ, որոնցից ամենանշանավորը Նահապետ Քուչակն է: Բայց 15-17-րդ դարերի որոշ ձեռագրերում պանդխտության և խոհախրատական հայրենների մեծ մասի հեղինակ է նշվում Հովհաննես Երզնկացին: Իսկ սիրային հայրենները հանդիպում են առանց հեղինակային անվան, սակայն 1882 թ. որոշ հեղինակներ և գրականագետներ հայրենների հեղինակ են ճանաչում Նահապետ Քուչակին: Հայրենները Քուչակի երգերը չեն, դրանք գուսանաժողովրդական երգեր են: Հայրենները գեղարվեստական բարձր հատկություններով օժտված արժեքներ են, «հայ քնարերգության ամենաքանչելի գանձերը», ասել է Վալերի Բրյուսովը

Միջնադարյան հայ բանաստեղծության յուրահատուկ և արժեքավոր բաժինն են կազմում հայրենները:

Հայ ժողովրդական բանաստեղծության մեջ հնուց ի վեր կիրառվել է հայրենի

կոչված ազգային-հայկական ոտանավորի չափը: Արդեն ասվեց, որ հայրենը 7-8 անդամների բաժանմամբ՝ 15-վանկանի չափն է, որ ժողովրդական երգից անցել է գրականությանը՝ անհատական բանաստեղծությանը: Հայրենի չափով է արդեն Գրիգոր Նարեկացին հյուսել իր որոշ տաղեր և «Մատյան ողբերգության» երկի մի դրվագը: Այդ չափին առավել հաճախ դիմել են հաջորդ դարերի բանաստեղծները:

Անանուն ժողովրդական երգիչ-գուսանները հայրենի չափով ստեղծել են փոքր ծավալի (չորսից մինչև ութ տող կազմող) երգեր, որոնք կոչվում են հայրեններ: Դրանք որոշ շարքեր կազմող տարբեր բնույթի երգեր են, որոնցով միջնադարի հայ աշխարհիկ մարդը դարեր շարունակ արտահայտել է իր խոհերն ու ապրումները:

Մեզ հայտնի հարյուրավոր հայրեններ ստեղծվել են տարբեր ժամանակներում, առնվազն 12-րդ դարից սկսած, անանուն գուսանների հեղինակությամբ, արևմտահայ գյուղական և քաղաքային միջավայրում (Ակն, Վան, Խարբերդ):

Այդ երգերը հանիրավի վերագրվել են 16-րդ դարի տաղասաց, աշուղ Նահապետ Քուչակին: Մինչդեռ վերջինս ընդամենը եղել է հայրենների մի շարքի երգող-տարածող:

ՍԻՐՈ ՀԱՅՐԵՆՆԵՐ

Հատկապես 12-13-րդ դարերում, կյանքի աշխարհիկացման շնորհիվ, հայ իրականության մեջ լայն տարածում են գտնում ժողովրդագուսանական սիրո հայրենները: Դրանք կյանքին, աշխարհի գեղեցկություններին սիրահարված հայ մարդու հոգու բանաստեղծական դրսևորումներն են: Այդ երգերն ասված են թե՛ տղամարդու, թե՛ կնոջ անունից կամ ներկայացնում են սիրահարների սեղմ երկխոսություններ:

Եթե Գրիգոր Նարեկացին իր մեջ կրել է աստվածային հոգևոր սերը, ապա հայրեններից մեկի հեղինակն իրեն համարում է ողջ երկրային սիրո կրողը: Նա իր սիրտը համարում է սիրո օրրան կամ ակունք, որից բխում է սերը և տարածվում աշխարհով մեկ.

*Երբ սէրն ի յաշխարհս եկաւ,
եկաւ իմ սիրտըս բնակեցաւ,
ապա յիմ սըրտէս ի դուրս՝
յերկըրէ յերկիր թափեցաւ,
եկաւ ի գըլուխս ելաւ,*

*յըղեղըս ելա՛ւ թառեցաւ,
աչիցս արտասուք ուզեց,
նայ արիւն ի վայր վաթեցաւ:*

(Երբ սերն աշխարհ եկավ, եկավ իմ սրտում բնակվեց, ապա իմ սրտից դուրս՝ երկրե երկիր թափվեց, եկավ գլուխս բարձրացավ, ուղեղս բարձրացավ թառեց, աչքիցս արտասուք ուզեց, ապա արյան պես հեղվեց):

Հայրեններից մեկում համեմատվում են սերը և մահը՝ երկու գերիզոր ուժեր: Նրանցից, սակայն, առավել տառապագին է համարվում սերը.

*Այս աստղնվորիս վերայ
երկու բան՝ ողորմ ու լալի.
մէկ՝ որ սիրոյ տէր լինի,
մէկ՝ որ գայ Գըրոողն ու փանի:
Մեռածըն գէմ չէ լալի,
որ ունի զիր խոցն ալանի.
Եկէք, զողորմուկս փեսեք.
ո՛չ մեռած է, ո՛չ կենդանի...*

(Այս աշխարհում երկու բան կա ցավալի ու ողբալի. մեկը, երբ մարդ սիրահարվում է, մեկը, երբ գալիս է մահը և տանում: Բայց մեռածը ողբալի չէ, որն իր վերքը բացահայտ ունի. եկէք, ինձ՝ խեղճիս տեսեք. ո՛չ մեռած է, ո՛չ կենդանի):

Սերը թեև անսպառ տառապանք և արյուն-արցունք է բերում, սակայն այն նաև կյանքի հիմքն է, սիրող սրտի կենդանությունը: Ուստի սիրահար երգիչը սիրած էակին համարում է իր հոգի-կյանքը կամ հոգու հոգին-կենսատու կյանքը: Հետևաբար, առանց սիրո և սիրած էակի սիրահարը դատապարտված է մահվան: Որպես օրինակ բերենք մեր լավագույն և հանրահայտ հայրեններից մեկը.

*Ես՛ աչք ու դու՛ լոյս, հոգի՛,
առանց լոյս՛ աչքըն խաւարի,
Ես՛ ծուկ ու դու՛ ջուր, հոգի՛,
առանց ջուր՛ ծուկըն մեռանի.
Երբ ծուկն ի ջըրէն հանեն,
այլվի ջուր ձըգեն՝ նա ապրի,
Երբ զիս ի քենէ զապեն,
քանց մեռնելն այլ ճար չի լինի:*

(Ես աչք եմ, և դու լույս ես, հոգի, աչքն է խավարում առանց լույսի, ես ձուկ եմ, և դու ջուր ես, հոգի, ձուկն է մեռնում առանց ջրի. երբ ձուկը հանում են ջրից, ուրիշ ջուր են գցում՝ նա ապրում է, երբ ինձ քեզանից բաժանեն, մեռնելուց զատ այլ ճար չի լինի):

Հիշենք, որ հայրենները ստեղծվել են այն ժամանակ, երբ երկրային, զգացական սերը մեղք է համարվել: Հայրեններից մեկի հեղինակը, չընդունելով այդ, համարձակվել է ընդվզել Աստծո դեմ՝ ասելով.

*Չաղէկն այլ ի գիրկս առնեմ
'ի Աստուծոյ երթամ, ցըցընեմ.
– Չաղէկըն դո՛ւ ստեղծեցիր,
ինձ յէ՛ր մեղք դընես, թէ սիրեմ:*

(Գեղեցկուհուն էլ գիրկս առնեմ և գնամ, ցույց տամ Աստծուն, ասեմ. «Գեղեցկուհուն Դո՛ւ ստեղծեցիր, ինչո՞ւ ես մեղադրում ինձ, որ սիրում եմ»):

Կարծես ի պատասխան այս խոսքի, մեկ այլ հայրենում Աստված (Ստեղծողը) Ինքը ասում է. « Ըստեղծողն իր բերնովն ասաց. – Մի՛ թողուր զատ եարդ ի ձեռաց» (Ստեղծողն Իր բերանով ասաց. «Այդ սիրուհուդ բաց մի՛ թող ձեռքից»): Սիրերգուն, ըստ էության, Աստծո անունից արդարացնում է ու խրախուսում սերն ու սիրո վայելքը:

Հայրենների հեղինակներից մեկը նույնիսկ հանդգնում է երկրային սերը հակադրել կուսակրոնությանը՝ Սիրո պաշտամունքը գերադասելով Աստծո պաշտամունքից: Դա արտահայտված է հետևյալ ձևակերպումով.

*Քանի մարըն զիս բերեր,
քահանի չեմ խոստովաներ.
Որպեղ քահանայ տեսեր՝
նայ ծրոեր ճամփուս ու ելեր.
Որպեղ մէկ աղւոր տեսել՝
գիրկ ու ծոց ւ՛ ի դէմ գընացեր...*

(Որքան ժամանակ, որ մայրս ինձ բերել է, քահանայի չեմ խոստովանվել. որտեղ քահանա եմ տեսել՝ ճամփաս թեքել եմ ու անցել, որտեղ մի գեղեցկուհի եմ տեսել՝ գրկին ու ծոցին եմ ընդառաջ գնացել):

Որոշ հայրեններում գեղեցկուհու լուսեղեն ծոցը համարվում է ժամատուն ու տաճար, որ նախընտրելի է Աստծո տուն եկեղեցուց: Մի հայրենում էլ, որ ասված

է կնոջ անունից, գեղեցկուհին անչափ զարմանում է, թե ինչպես իր սիրածը թողել է սիրո վայելքն ու դարձել կուսակրոն արեղա.

*Եկին ու խապար բերին,
թէ՛ քո եարն եղեր արեղայ.
փուշ արմացքըն զիս պատեց,
թէ նա հնց եղաւ արեղայ.
բերնիկն էր շաքրի սովոր,
աճապ հնց կերաւ նա բակլայ.
անձիկն էր շապկի սովոր,
աճապ հնց հագաւ նա վալայ:*

(Եկան և լուր բերեցին, թե՛ քո սիրածը դարձել է արեղա. խոցող զարմանքն ինձ պատեց, թե նա հնց եղավ արեղա. բերանն էր շաքարի սովոր, արդյոք հնց կերավ նա բակլա, մարմինն էր շապկի սովոր, արդյոք հնց մազեղեն հագավ):

Հայրենների հեղինակները պահանջել են սիրո ազատություն. զոռով (ճորով)-հարկադրանքով սեր չի լինում. «Ան սերն, որ ճորով լինի, հետ անոր խաղալն է մահալ» (Այն սերը, որ հարկադրանքով լինի, անիմաստ է նրա հետ խաղալ): Չի լինում նաև հաշվենկատ, դրամով գնվող սեր, ինչը խստորեն դատապարտում են մեր սիրերգուները՝ պաշտպանելով ազնիվ և ազատ սիրո զգացմունքը.

*Երեկ ցորեկով բարով
տանէին մէկ եար մի ճորով.
ըզնա ճորով է տարած,
կամ խաբած է զինք դըրամով:
Սէրըն որ դրամով լինի,
զինք էրել պիտի կըրակով.
սէրըն խընձորով պիտի
ու դրամ-դրամ շէքերով:*

(Երեկ օրը ցերեկով տանում էին մի սիրուհու զոռով. նա զոռով էր տարված, կամ խաբել էին նրան դրամով: Սերը որ դրամով լինի, այն պիտի վառել կրակով. սերը խնձորով պիտի լինի և մանրիկ-մանրիկ շաքարով):

Հայրեններից մեկում էլ առաջ է քաշված այն գաղափարը, որ սիրահար զույգին չպետք է խանգարի նաև նյութական անհավասարությունը: Հարուստը կարող է սիրել աղքատին. շատ հարուստներ աղքատանում են, մինչդեռ սերը

մնում է հաստատ...

Սիրո հայրեններում, ինչպես առհասարակ բնորոշ է միջնադարյան սիրերգությանը, մեծ տեղ է գրավում սիրած կնոջ արտաքին գեղեցկության նկարագրությունը: Բանաստեղծական այդ փոքրիկ ձևերում, բնականաբար, նկարագրությունը սեղմ է և օժտված բնութագրիչ մակդիրներով, փոխաբերություններով ու համեմատություններով: Համեմատության եզր են ընդունվում լուսատուները, ծաղկած բնությունը, զարդեղենը: Հայրենների հեղինակներն իրենց սիրելի էակին ամենից ավելի համարում են հողեղեն ու բարձրագնա լուսին, շորորուն կաքավ, ծառ արմավենի, նշենի, հագրեվարդ. մարգարտե շարոց և այլն:

Սիրո հայրեններում գովերգվող գեղեցկուհիներն, ի վերջո, ժողովրդական և գուսանական ավանդույթի շնորհիվ ունեն նաև ընդհանրական սուրաթ-պատկեր՝ թուխ ու ծով աչքերով, կամար ու թուխ ամպ հոնքերով, բարակ մեջքով, շաքար ու նուշ բերանով, լուսեղեն ծոցով, մոմե մատներով...

Հայրենների գեղեցկուհին, որ պարզ գեղջկուհի է կամ քաղաքաբնակ հասարակ կին, ծանրաբեռնված չէ շքեղ հագուստներով ու զարդեղենով, կրում է կանաչ շապիկ և ներդաշնակում է կանաչ հագած բնությանը.

*Մըտիկ իմ եարին արէք.
զինչ հագեր՝ ամենն է կանանչ,
հագեր գոյնըզգոյն կապայ.
կոճակ ու օղակն է կանանչ.
առեր ու պաղշան մըտեր,
ջուր կ'երթայ, եզերն է կանանչ.
մըտիկ ծառերուն արէք.
ծառն ծաղկեր, տերեն է կանանչ:*

(Իմ սիրուհին նայեք. ինչ հագել է՝ ամենն է կանաչ, հագել է գույնզգույն զգեստ. կոճակն ու օղակներն են կանաչ. հագել ու այգի է մտել, ջուրն է հոսում, եզերքն է կանաչ. ծառերին նայեք. ծառը ծաղկել, տերեն է կանաչ):

Այստեղ, ինչպես տեսնում ենք, սիրո երգը միահյուսվել է բնության երգին: Սակայն զուտ բնության պատկերներ չկան հայրեններում: Բնությունը միջոց է սիրած էակին պատկերելու, գովերգելու համար:

Արտահայտելով իր անսահման հիացմունքը սիրած կնոջ նկատմամբ՝ հայրեններից մեկի հեղինակը հայացքն ուղղում է աստղերին՝ այնտեղ գտնելու իր լուսե գեղեցկուհու նմանակին.

*Իմ եանր, թէ ի վեր հայիմ,
թէ ի վայր՝ քան զքեզ չկայ.
ամէնն աստեղաց նըման,
դուն՝ ի մէջ պայծառ լուսընկայ...*

(Սիրուիհն, վերև եմ նայում թե ներքև՝ քեզ նման չկա. բոլորն աստղերի նման են, դու՝ նրանց մէջ պայծառ լուսնյակ):

Սիրո հայրենների հեղինակները բնությունն ու բնական երևույթները շնչավորում են, անձնավորում և երբեմն զրուցում են նրանց հետ՝ յուրովի արտահայտելով իրենց խոհերը, ապրումներն ու գովերգությունը: Հիշենք այն հայրենը, որտեղ սիրահարը դիմում է լուսնին՝ համեմատելով նրան իր գեղեցկուհուն՝ հողեղեն-երկրային լուսնի հետ, որով կարող է հմայվել անգամ ինքը՝ երկնային լուսատուն.

*Լուսին, պարծենաս, ասես.
«Լոյս կու տամ ես աստղնւորիս».
ահա հողեղէն լուսին
ի գըրկիս, երեսն՝ երեսիս.
թէ չես աստալ այս գերոյս,
յեպ տանիմ ըզփէշ կապայիս.
վախես՝ սիրոյ փէր լինիս,
լոյս պակաս տաս աստղնւորիս:*

(Լուսին, պարծենում ես, ասում ես. «Լոյս եմ տալիս ես այս աշխարհին». ահա հողեղեն լուսինը գրկիս, երեսը՝ երեսիս. եթե չես հավատում ինձ՝ գերուս, կբացեմ փէշը զգեստիս. վախենամ սիրահարվես, պակաս լոյս տաս աշխարհին):

Սիրո հայրեններում արտացոլվել են նաև կանացի բնավորության որոշ գծեր: Կանացի հպարտության ու արժանապատվության արտահայտիչն է այն գեղեցկուհին, որը մերժում է համբույրի համար առաջարկված դրամը՝ համաձայնելով միայն անկեղծ, անշահախնդիր զգացմունքին.

*Պագըն որ դրամով լինի,
չեմ իտար, թ՛աշխարհ ասերի.
թէ ինձ մուրափով կ՛ուզես,
եկո պա՛մզ՝ հաւասդ անցանի:*

(Համբույրը որ դրամով լինի, չեմ տա, թեկուզ աշխարհն ավերվի. եթե ինձ սրտանց ես ուզում, եկ համբուրի՛ր, թող ուզածդ կատարվի):

Սիրո հայրեններից շատերը սիրահարի տարբեր հոգեվիճակների բանաստեղծական արձագանքներ են: Դրանք ապշեցնում են իրենց բյուրեղացած սեղմությամբ, անակնկալ ավարտով՝ հաճախ իրենց մեջ խտացնելով մի ամբողջ երկարաշունչ բանաստեղծության բովանդակություն:

Ահա լուսնյակ գիշերով քուն մտած սիրահար աղջիկը, որ երազի մեջ տեսնում է սիրածին և հանկարծակի արթնանում քնից: Այս պարզ պատկերը մշակված է որպես մի տպավորիչ մանրաքանդակ.

*Գիշերս ես ի քուն էի
յիմ հալալ տեղացն ի վերայ.
լուսին ալ կամար կապեր
յիմ ճօհար անձկանն ի վերայ.
իմ եարն յերազիս եկաւ,
ի սիրուն զէտ հարբած եղայ.
Յանկարծ ի քընուս ելայ, –
լուսինկան՛յ ու խիստ կու ցոլայ:*

(Գիշերը ես քնած էի իմ մաքուր անկողնու վրա. լուսինն էլ կամար էր կապել իմ գոհար մարմնի վրա. սիրածս երազիս երևաց, սիրուց հարբածի պես եղա. հանկարծ քնից արթնացա. լուսնյակ էր ու ցոլում էր վառ):

Հայրենները, լինելով տարբեր սիրերգուների հեղինակած երգեր, արտահայտում են ինչպես մերժված սիրո հարուցած ցավը, այնպես էլ փոխադարձ սիրո պարզևած երջանկությունը:

Մերժված սիրահարի խոսքը հաճախ վերածվում է ողբի, որտեղ իշխում է կարոտի ու սպասումի մորմոքը: Նման սիրո երգիչն իրեն համեմատում է ամառվա տապին չորացող ծաղիկի հետ, որը երկինքն ի վեր մի կաթիլ ջուր է աղերսում: Իրեն համեմատում է նաև պղտոր ու անձրևոտ ամպի հետ և բողոքում է իր աչքերից, որ չեն մնում «մէկ մի պահ պարապ»՝ արտասվում են զօր ու գիշեր:

Հայրեններում ավելի շատ պատկերված է փոխադարձ երջանիկ սիրո շնորհած բերկրանքը: Այդպիսի դեպքերում արդեն սիրո երգը վերածվում է վայելքի, ուրախության երգի: Ահա կնոջ անունից ասված այդպիսի մի հայրեն.

Հան՛յ եար, հան՛յ եար,

*Էպրըշում խալի ծըգիմ
ոսկիթել փօշակի վերայ.
բարձիկ մը սուֆրա դընիմ՝
տապակած կաքաւ մի վերայ.
շուշայ մի գինի բերեմ,
ան խըմիմ քու սիրուն վերայ...*

(Ո՛վ սիրելի, ո՛վ սիրելի, մետաքսե գորգ փռեմ ոսկեթել ներքնակի վրա. մի բարձիկ իբրև սփռոց դնեմ՝ վրան տապակած կաքավ. մի սափոր գինի բերեմ. խմեմ այն քո սիրո համար):

Այս հայրենի ամփոփիչ տողում, ինչպես նաև մի շարք այլ հայրեններում առկա են կանացի ծոցի զանազան պատկերներ, որոնցով սիրերգու-գուսաններն ազատ և համարձակ արտահայտել են իրենց սիրային բուռն ու նվիրական զգացմունքները:

Որոշ ժամանակ էր անհրաժեշտ, որպեսզի սիրո երգը, հիմնականում ժողովրդագուսանական քնարերգության ազդեցությամբ, մուտք գործեր գրականության, անհատական-հեղինակային բանաստեղծության ոլորտը՝ դառնալով գրական ժանր: Դա տեղի ունեցավ 13-րդ դարի երկրորդ կեսին, երբ ասպարեզ իջավ մեր առաջին սիրերգակ Կոստանդին Երզնկացին:

Շատ ավելի երկար ժամանակ էր անհրաժեշտ, որ սիրո հայրեններին բնորոշ ազատ ու համարձակ պատկերները կիրառվեին նաև գրական-բանաստեղծական գործերում: Դա հիմնականում կատարեց 17-րդ դարի սիրերգու Նաղաշ Հովնաթանը...

ՊԱՆԴԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՅՐԵՆՆԵՐ

Պանդիստության երևույթը հայության մեջ արմատավորվել է հատկապես 11-րդ դարում՝ սելջուկ թուրքերի կործանարար ասպատակությունների հետևանքով: Այդ ժամանակ ողբագիր պատմիչ Արիստակես Լաստիվերտցու վկայությամբ՝ հազարավոր հայեր վտարանդի եղան և «ցրվեցին մուլրական կոչված աստղերի նմանությամբ»:

Մեր ժողովրդին հասած ամենատարբեր աղետների հետևանքով մինչև օրս շարունակվող և մեր ազգային ինքնությանը սպառնացող այդ երևույթն իր տխուր արձագանքն է գտել ժողովրդական երգերի և ժողովրդագուսանական հայրենների մեջ:

Հայրեններից մեկում տեսնում ենք տարաբախտ սիրահարին, որ հարկադրաբար մեկնում է պանդիստության (ղարիբության): Նա այսպիսի սրտառույ խոսքերով է այլոց ի պահ (ամանաթ) տալիս իր սիրած էակին.

*Ջիմ եարն ամանաթ կուտամ.
ի վարդին մէջըն պահեցէք.
թէ երթամ ու շուտով դառնամ,
զամանաթս ի փէր հասուցէք,
թէ երթամ՝ խարիպուկ մեռնիմ,
վարդըն՝ ձեզ, զփէրըն յիշեցէք:*

(Սիրուհուս ի պահ եմ տալիս. վարդի՛ մեջ նրան պահեք. եթե գնամ ու շուտ ետ դառնամ, պահուստս տիրոջը հասցրեք, եթե գնամ՝ պանդուխտ մեռնեմ, վարդը՝ ձեզ, տիրոջը հիշեք):

Մեկ ուրիշ հայրենում տեսնում ենք այն կնոջը, որի սիրեցյալը մեկնել է պանդիստության: Անչափ հուզիչ այս հայրենը հորինված է իբրև բոլորած լուսնի և պանդուխտին սպասող կնոջ երկխոսություն...

Հիշենք նաև այն հայրենը, որտեղ խոսում է արդեն ինքը՝ օտարության մեջ տառապող պանդուխտը: Նա իրեն համեմատում է հայրենի լեռնաշխարհում բուսած դեղձենու հետ, որին քաղել են ու տնկել օտար այգու մեջ: Ու թեև նրան ջրում են քաղցր շաքարաջրով, սակայն նա իր ապառաժ քարն է ուզում և հայրենի սարերի հալոցքի ջուրը՝ աղաչելով. «Եկէք, զիս տեղըս տարէք ու ձընան ջըրով ջըրեցէք»:

Պանդուխտի ծանր հոգեվիճակն արտահայտող լավագույն հայրեններից է հետևյալը.

*Ժամ-ժամ զիմ դարիպությունս
ես յիշեմ եւ նըստիմ ու լամ.
ճապղել եմ ջըրի նըման,
ի յօտար երկիր կու գընամ...
Յորեկն եմ նետի նըման,
ուր նետեն, ես ի հոն կենամ,
գիշերն՝ աղեղան նըման,
ես լարթափ ի վար կու մընամ:*

(Երբեմն իմ պանդխտությունն եմ հիշում և նստում ու լաց եմ լինում. հոսել եմ ջրի նման, օտար երկիր եմ գնում... Յերեկը նետի եմ նման, ուր նետեն՝ այնտեղ եմ մնում. գիշերն աղեղի եմ նման, լարից ընկած եմ մնում):

Հատկապես պանդխտության հայրեններից ճյուղավորվել են հայ ժողովրդական երգի մեկ այլ տեսակը ներկայացնող անտունիները...

13-րդ դարում արդեն ժողովրդագուսանական հայրենների հետևությամբ և ոգով ստեղծվել են անհատական-գրական հայրեններ: Այդ ավանդույթի սկզբնավորողը դարի երկու խոշոր բանաստեղծներն են՝ Հովհաննես Երզնկացիի և Ֆրիկը:



Հարցեր և առաջադրանքներ

1. Երբ և որտեղ է ծնվել Նահապետ Քուչակը, և էլ ինչ անուններով է հայտնի եղել նա:
2. Ինչ ավանդություններ են կապված նրա անվան հետ:
3. Ինչ է հայրենը: Ինչ կառուցվածք ունի այն:
4. Ինչ թեմաներով է ստեղծագործել Քուչակը:
5. Ըստ ավանդության՝ ինչո՞ւ և երբ է մահացել բանաստեղծը:
6. Ո՞ր դարում է արմատավորվել պանդխտության երևույթը հայության մեջ և ինչի՞ հետևանքով:
7. Վերաշարադրե՞ք հայրենների բովանդակությունը՝ ներկայացնելով նրանցում արծարծված թեմաները:
8. Երկայուն աղյուսակով ներկայացրո՞ւ Ֆրիկի ապրած ժամանակաշրջանը և ստեղծագործության ընդհանուր պատկերը (անհատական աշխատանք):

Ֆրիկի ապրած ժամանակաշրջանը	Ստեղծագործության ընդհանուր պատկերը՝ ըստ ժամանակագրության

9. Ընդհանուր գծերով բնութագրե՞ք հայրենների բովանդակությունը՝ ըստ արձարծված թեմատիկայի:
10. Բնութագրե՞ք պանդուխտի ծանր հոգեվիճակ արտահայտող հայրենների հերոսներին՝ մեկնաբանելով նրանց արարքների շարժառիթները:
11. Հայրեններից մեկը վերարտադրե՞ք նկարի միջոցով:
12. Ներկայացրե՞ք հայրենների լեզվաոճական առանձնահատկությունները՝ բերելով օրինակներ:
13. Հայրեններից դճրս գրեք համեմատություններ, փոխաբերություններ, մակդիրներ, պատկերավորման այլ միջոցներ և մեկնաբանե՞ք:
14. Նկարագրե՞ք հայրենների քնարական հերոսուհուն՝ օգտվելով հեղինակի բառապաշարից:
15. Ներկայացրե՞ք հայրենների քնարական հերոսների զգայական վիճակը, գնահատե՞ք մարդկային հարաբերությունները, նրանց արարքները:
16. Բանաստեղծությունից դճրս գրեք ձեզ անձանոթ բառերն ու արտահայտությունները և բացատրե՞ք դրանց նշանակությունը: